ԾԳ.

Առաջ կը տանի Հ. Եղիա՝ ժամանակակից պատերազմական խնդիրներու շուրջ ունեցած իր մտերմամտնութիւնները։

Գերայարգելոյ և Վսեմագունի տեառն տեառն
Միխրարայ Աստուածաբանութեան վարդապետի և Աբբայ Հօրն մերոյ

...Ի բանակն Ֆրանսզու կարի թանկութիւն է և վասն այսորիկ և վասն այլոց պատճառաց բազումք ի զինուորացն նոցունց դիմեն առ բանակս սոցին. սոքա ևս ոչ թողուն ի բանակս իւրեանց, այլ զոմանս այսր և անդր ցրուեն, և ոմանք ի նոցունց աստ եկեալ են զինուորութիւն առնեն։ Բայց բանակն կայսերական ամենուստ կողմանց առատութիւն է, նաև են յոյժ առողջք և պատրաստք։ Կայսերական կատանայքն, այսինքն մաճառք, ռացք և խովատք, կարի յոյժ աւերումն տան նոցունց գիւղօրէիցն և զօրացն, և վասն այսոցիկ յոյժ նեղեալք և խռովեալք են այժմ, զի ոչ կարեն զընդդէմ ունիլ կատանայից սոցին, պատճառաւ սրնթացութեան և ուժեղութեան նոցին։ Նախ քան զժամանելն գրոյս այսորիկ լսելոց ես այդր զլուր յաղթութեան, զի զօրքն կայսերական յունիսի 17 անցեալ են զշուրն և են այժմ ի հողս նոցին, և սպասեն զօրացն պռանտէպուռքին, թէպէտ զոյ այժմ ընդ էվճէնեային 12 անուանի իշխանք և զինուորք իննսուն հազար և տակաւին օրստօրէ զնան այլք զինուորք և կատանայք։ Տանծկացիք այժմ յուսահատաբար մարտնչին գիտելով զայս թէ յետ առնման քաղաքին զմեծագոյն մեաս կրելոց են պատճառաւ ստանիսլավին։ Վերջապէս սոյն քաղաքս ևս հանգոյն թէվրուզու ի խորին պատժոյ և չքաւորութեան ժամանելոց է պատճառաւ Ֆրանսըզին։... Աստ այսպէս համբաւեն թէ կարմիր գտակն առեալ է զՊաղտատ, շատ չար խորհուրդ ունէր թուրքի թագաւորն, բայց չեղև պատճառաւ կարմիր գըտակին....

Գերայարգելութեան ծառայ

Ցամի տեառն 1734 *Եղիա վարդապետ*
Յուլիսի 3

[Պելկրատ]

ԾԴ.

Ազգային տեսակէտներով բաւական հետաքրքրական նիւթեր կը պարունակէ Հ. Մանուէլի հետևեալ նամակը։

Ան կը ներկայացնէ միևնոյն ատեն նամակագրին մէկ քանի կարևոր ինքնակենսագրական գիծերը՝ օգտակար ծանօթութիւններով։

Գերայարգելոյ տեառնդ տեառնդ Աբբայիդ Հայր
յայտարարութիւն

...աստ եղեալքն բնաւք զախս և զկարասիս իւրեանց բաժանեցին ուր ուրեք իմացեալ թէ զուցէ բերդօրայք հաստատք, մինչի ի գլխարկս կանանց ոսկեա փուլէրովք